ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2024թ. N_____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ՝ Հովհաննես Սաֆարյանին սեփականության իրավունքով պատկանող Պ. Սևակի փողոցի հ.1/15 հասցեում, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 45.9քմ մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.03062022-01-0340 վկայական/ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Պ. Սևակի փողոցի հ.5/2 հասցեին հարող տարածքում՝ տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 43.247քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելուն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Հովհաննես Սաֆարյանին սեփականության իրավունքով պատկանող Պ. Սևակի փողոցի հ.1/15 հասցեում, Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 45.9քմ մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.03062022-01-0340 վկայական/ փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Պ. Սևակի փողոցի հ.5/2 հասցեին հարող տարածքում՝ տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 43.247քմ մակերեսով հողամասի հետ:

Հովհաննես Սաֆարյանը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Պ. Սևակի փողոցի հ.1/15 հասցեում բնակելի տուն կառուցելու նպատակով ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրելու խնդրանքով, սակայն քաղաքացու խնդրանքը հնարավոր չի եղել իրականացնել, քանի որ քննարկվող հողամասը գտնվում է անմիջապես բնակելի շենքին կից և կառույցի իրականացմամբ մասնակի կփակվի շենքի այդ կողմի պատուհանները: Ստեղծված իրավիճակում վերջինիս առաջարկվել է իրեն տրամադրված հողամասը փոխանակել այլ համարժեք հողամասի հետ:

Մասնագիտական որակավորում ունեցող «ԱԲԻՏ» ՍՊ ընկերության կողմից տրամադրած եզրակացության համաձայն՝ Պ. Սևակի փողոցի հ.1/15 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Հովհաննես Սաֆարյանին պատկանող և Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Պ. Սևակի փողոցի հ.5/2 հասցեին հարող տարածքում՝ գտնվող հողամասերի շուկայական արժեքները կազմում են 6.700.000 ՀՀ դրամ:

Համաձայն հողային օրենսգրքի 71–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի փոխանակումը դրանց օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կատարվում է համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ